

ՀԻՆ ԷԶԵՐ

Տ Ա Ղ

Թոխաբքի Ստեփանոս Երեց

Հետեւեալ ողբական տաղին Հանդիպեցանք Ս. Աթոռոյս Թ. 2448 (էջ 416-9) եւ Թ. 2442 (էջ 5-6) Մաշտոցներուն ձէջը: Առաջինը ունի 14 տուն, իսկ երկրորդը ունի առաջին վեց տունները եւ ութերորդ տունը միայն:

Թ. 2448 Մաշտոցը օրինակուած է կանոնաւոր բոլորգրով «ի Թբուականիս Հայոց ՌձեՆԸ [≈ 1699], ... ի քաղաքն Թոխաթ... ձեռամբ յոքնամեղ Միքայէլ գրչի, ի խնդրոյ Յովնէի Քահանայի...» (էջ 450):

Թ. 2442 Մաշտոցը նոյնպէս կանոնաւոր բոլորգրի է, օրինակուած «ի Թվարերութեանս Հայոց ՌՂԴ [≈ 1645] ի Բարերթ, ձեռամբ... Սէթ դգրի» (էջ 453): Խնդրոյ առարկայ տաղը սակայն օրինակուած է Մաշտոցիս սկզբը, նոտր գրով եւ բազմաւորիս:

Վայ մեզ մեղօք չարեօք լըցաք,
գպատուիրան Տեսանըն մոռացաք,
գլխտուած առ մեզ քարկացուցաք,
եւ ի ցատուսն գնա շարժեցաք:

Վասն այն ըզմեզ պատուականաց,
գղուտոր եւ գորդիտըն մեր խոցեաց,
գանմեղ տրդայքն մեր չնջեաց,
շատ ծընողաց սիրտ կըսկըծեաց:

Անոյշ տրդայք եւ քաղցրամայն,
ստեմ սաղմոս եւ շարակամ,
աղբերք մոցա ըսպատեցան,
ձայնք յակնեցացըս մեր հատամ:

Լուսին ւ արեւմ էիք նըման,
վարդ մամուշակ ծաղիկ նըռան,
առջեւ ծնողաց թաւալեցան,
աղիք մոցա գալարեցան:

Շատք հագեվար յերկար կացին,
գսիրտ ծընողացն խորովեցին,
բագումք գերկուսն մէկ մաշ գրբին,
անբուտոր ւ անորդի մընացին:

Ձեռ. Ս. Յ. Թ. 2448

Փափուկ մարմինքն ի հոգ դարձան,
ծովային աչքն խաւարեցան,
սպիտակ կարմիր աղուր պատկերն,
նեքքիւ հոգոյն գընտանեցան:

Ով այս անուն իմ լոյս աչաց,
գիտաս աշխարհիս թողեր ի բաց,
հետեւեցար անանց կենաց,
եղեր ընկեր մարտիրոսաց:

Ով դու որդեակ սիւն իմ սրտաց,
գրկով գգաւծ եւ համբուրած,
իմ դեռաբոյս ծաղիկ փտաց,
գնացիր յերկիրն կենդանեաց:

Ով այս անուն դու իմ որդեակ,
բարձրաուղէ եւ գերունակ,
ուրախարար սիրոյ բաժակ,
քո ծընողաց սիրուն գաւակ:

Ով իմ որդեակ կարմրագունակ,
գուտ եւ մաքուր ոսկետեսակ,
ծիրամափայլ աչքն տուտակ,
իսչի ծաղիկ եւ մամուշակ:

Ով այս անուն ծառ քարունակ,
համեղ ողկոյգ քաղցրամաշակ,
անուշահամ ախորժ բաժակ,
ակ մարգարիտ եւ ոսկեհատ:

Ով իմ որդեակ մամուկ ազատ,
սուրբ եւ մաքուր եւ անարատ,
յախտից մեղաց հասակդ ի գատ,
ամփոքր չարեաց գով եւ անախտ:

Ով այս անուն մաքուր տատրակ,
ոսկեփետուրի հաւ սիրտաւարգ,
բարձրաթրուիչ աղաւնոյ ձագ,
խառնեալ ի յամմահից բանակ:

Որոց գըլուխ հանդիսապետ,
է թագաւորն արարածոց,
Յիսուս Քրիստոս Աստուածըն մեր,
ինքն օրհնեալ յամէն բերանց:

Հրատ. Ն. ԵՊՍ. ՄՈՎԿԱԿՆ